

# ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ








ՏԱՐԵԿԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
2010 ԹՎԱԿԱՆ

# ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի (այսուհետև՝ Բանկ)

## Վարչության հայտարարությունը

Մեր լավագույն տեղեկացվածության համաձայն Բանկի ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների տարեկան զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Բանկի ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքերը և զարգացումը և ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է Բանկը:

Բանկի Վարչության անդամներ.

<u>Աշոտ Օսիպյան</u> (անուն, ազգանուն)	<u>Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն</u> (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>29.04.11թ.</u> (ամսաթիվ)
<u>Արթուր Հակոբյան</u> (անուն, ազգանուն)	<u>Վարչության անդամ, Գործադիր տնօրենի առաջին տեղակալ</u> (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>29.04.11թ.</u> (ամսաթիվ)
<u>Դավիթ Հարությունյան</u> (անուն, ազգանուն)	<u>Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ</u> (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>29.04.11թ.</u> (ամսաթիվ)
<u>Տիգրան Գալստյան</u> (անուն, ազգանուն)	<u>Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ</u> (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>29.04.11թ.</u> (ամսաթիվ)
<u>Գարիկ Աղամյան</u> (անուն, ազգանուն)	<u>Վարչության անդամ, Ռիսկերի կառավարման վարչության պետ</u> (պաշտոն)	 (ստորագրություն)	<u>29.04.11թ.</u> (ամսաթիվ)

**ՈՐՊԵՍ ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂ  
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՏԱՐԵԿԱՆ  
ՁԵԿՈՒՅՑԸ**

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կառավարման մարմինների 2010 թվականի գործունեության տարեկան սույն զեկույցը ներկայացնում է՝

- Բանկի բիզնեսի արդյունքերի և զարգացման իրական պատկերի նկարագիրը,
- կարևոր դեպքերի նկարագիրը,
- Բանկի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը:

## Բանկի հիմնական ցուցանիշների միտումները

- +44.8 % Ընդհանուր ակտիվները 2010 թ. վերջին կազմել են 62,948.5 մլն. ՀՀ դրամ, որը 2009թ. համեմատ աճել է 44.8 %-ով:
- +57.0 % Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվությունները 2010թ. վերջին կազմել է 25,264.4 մլն. ՀՀ դրամ, որը 2009թ. համեմատ աճել է 57.0 %-ով:
- +48.3 % 2010թ. վերջին Բանկի ընդհանուր պարտավորությունները կազմել է 52687.9 մլն. ՀՀ դրամ, որը 2009թ. համեմատ աճել է 48.3 %-ով:
- + 54.0 % Հաճախորդներից ներգրավված միջոցները 2010 թ. վերջին կազմել են 23,282.9 մլն. ՀՀ դրամ, որը 2009թ. համեմատ աճել է 54.0%-ով:
- +250.1 % Ջուտ շահույթը 2010 թ. վերջին կազմել է 1,279 մլն. ՀՀ դրամ, որը 2009թ. համեմատ աճել է 250.1 %-ով:
- + 29.1 % Ընդհանուր կապիտալը 2010թ. վերջին կազմել է 10,260.5 մլն. ՀՀ դրամ, որը 2009թ. համեմատ աճել է 29.1 %-ով:
- + 41.4 % Հաճախորդների թիվը 2010 թ.վերջին կազմել է 93,523՝ որը 2009թ. վերջի համեմատ աճել է 27,400-ով կամ 41.4%-ով:
- +37.5 % Թողարկված պլաստիկ քարտերի քանակը 2010 թ. վերջին կազմել է 52,452 հատ, որը 2009թ. վերջի համեմատ աճել է 14,312 հատով կամ 37.5%-ով:
- =33 2010 թվականի ընթացքում բացվել են 6 մասնաճյուղ: Տարեվերջի դրությամբ բանկի տարածքային ցանցն ընդգրկել է 33 մասնաճյուղ:


## Ակտիվներ

2010 ֆինանսական տարում, նախորդ տարվա համեմատ, Բանկի ակտիվներն աճել են 19,482,537 հազ. ՀՀ դրամով կամ 44.8%-ով՝ տարեվերջին կազմելով 62,948,546 հազ. ՀՀ դրամ: Նշված զգալի աճն ընթացավ ակտիվների կառուցվածքի արդյունավետ համամասնությունների պահպանմամբ: Նման միտումների ընդհանրական գնահատականը ստանալու համար անհրաժեշտ է դիտարկել տնտեսության հետճգնաժամային ընդհանուր համայնապատկերը, որը բնարոշվում է տնտեսության ճյուղերի դանդաղ վերականգմամբ ու աշխուժացմամբ: Իսկ գյուղատնտեսության և շինարարության ճյուղերում բեկում չարձանագրվեց:


Այդ միջավայրում Բանկի վարած ընդլայնողական քաղաքականությունը բավականաչափ համարձակ էր և միաժամանակ հուսալի՝ կառավարելիության մակարդակով: Բանկի վարած ճկուն քաղաքականության արդյունքում ընդլայնվեց հաճախորդների քանակը: Բանկը տնտեսական դժվարին պայմաններում իր հաճախորդների համար հանդես եկավ որպես հուսալի ու վստահելի գործընկեր, որի շնորհիվ ձևավորվեց որակյալ վարկային պորտֆել: 2010 ֆինանսական տարում Բանկի ակտիվների աճը հիմնականում պայմանավորված է եղել հաճախորդներին տրամադրված վարկերի 57.0%, աճով, որը մատնաշում է Բանկի ծավալուն վարկավորման գործունեության մասին:

Ընդլայնողական քաղաքականություն իրականացնելու համար Բանկը հաջողությամբ ավելացրեց սեփական կապիտալն ու ֆինանսական միջոցներ ներգրավեց տարբեր միջազգային ֆինանսական կառույցներից: Բանկը հետևողականորեն ակտիվ մասնակցություն ցուցաբերեց ՀՀ կառավարության աջակցությամբ իրականացվող գրեթե բոլոր հակաճգնաժամային վարկային ծրագրերում:

Բանկի ակտիվների շարժը նախորդ տարիների համեմատ, ինչպես նաև Բանկի ակտիվների կառուցվածքը հաշվետու տարվա արդյունքներով, ներկայացված են ստորև բերված գրաֆիկներում:



## ԱԿՏԻՎՆԵՐԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ, հազ. ՀՀ դրամ



Բանկի ակտիվների կառուցվածքը վկայում է այն մասին, որ Բանկի ակտիվների մեծ մասը՝ ավելի քան 64%-ը բաժին է ընկնում եկամտաբեր ակտիվներին՝ միևնույն ժամանակ պահպանում է բարձր իրացվելիության մակարդակը:

### Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ

2010 թվականի հետզնաժամային իրավիճակում Բանկի կողմից տրամադրվել են շուրջ 47,500,000 հազ. ՀՀ դրամի վարկեր, որը գերազանցում է 2009 թվականի ցուցանիշը 22,900,000 հազ. ՀՀ դրամով, որի արդյունքում Բանկի հաճախորդներին տրված վարկերը և փոխատվությունները, նախորդ տարվա համեմատ, աճել են 9,168,194 հազ. ՀՀ դրամով կամ 57.0%-ով:

2010թ. Բանկի վարկային ներդրումների աճը մի կողմից պայմանավորված է եղել Բանկի խորհրդի կողմից հաստատված ռազմավարությամբ, մասնաճուղային ցանցի ընդլայնմամբ, մյուս կողմից՝ վարկավորման պահանջարկի աճով: Բանկի վարկավորման ակտիվ քաղաքականությունն ուղղորդվել է նաև համարժեք դիվերսիֆիկացիայով, վարկային պորտֆելի աճը զուգահեռաբար արձանագրվել է վարկավորման տարբեր ուղղություններում:

Հաշվետու տարվա ընթացքում **փոքր և միջին բիզնեսին** տրամադրված վարկերի


մնացորդը կազմել է 10,073,124 հազ. դրամ (63.9%-ով կամ 3,926,030 հազ. ՀՀ դրամով գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը):

2010 թվականի ընթացքում աճել է **հիփոթեքային վարկերի** մնացորդը և կազմել 2,100,992 հազ. ՀՀ դրամ (21.1%-ով կամ 366,566 հազ. ՀՀ դրամով գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը): Հիփոթեքային վարկերի աճը պայմանավորված է եղել ինչպես Բանկի միջոցների ընդլայնմամբ, այնպես էլ ՀՀ կառավարության կողմից հիփոթեքային շուկայի զարգացման նպատակով իրականացվող տարբեր ծրագրերով:

Վարկային ներդրումների քանակական աճի պարտադիր պահանջներից է եղել դրանց համարժեք որակի պահպանումը: Ստանդարտ վարկերի տեսակարար կշիռը 2010 թվականի վերջում պահպանվել է 99.7 տոկոսի շրջակայքում, որը պորտֆելի կառավարելիության բարձր աստիճանի խոստուն վկայությունն ու գանահատականն է:

Վարկային ռիսկի կառավարելիության նպատակով Բանկում կիրառվում է միջազգային խորհրդատուների համագործակցությամբ մշակված վարկառուների ռիսկի գնահատման և վարկառուի ապահովվածության որակի բազմագործոնային գնահատման մոդելը, որը թույլ է տալիս ոչ միայն գնահատել վարկառուի գործունեության եւ վարկի ապահովման միջոցի հետ կապված ռիսկի աստիճանը, այլև, ըստ հաշվարկված արդյունքի, սահմանել տրամադրվող վարկի տոկոսադրույքը: Բանկում կիրառվում է նաև վարկառու կազմակերպության կառավարման որակի գնահատականի մոդելը, որի շնորհիվ հնարավորություն է ստեղծվել բացահայտել կառավարման օղակի ուժեղ եւ թույլ կողմերը, ինչպես նաև հնարավոր ռիսկերը: Վարկային ռիսկի կառավարման նշված մոդելները կառուցված են միջազգային բանկային ստանդարտների և լավագույն փորձի հիման վրա:

Վարկավորման արդյունավետ գործընթացի մյուս բաղադրիչներն են վարկային մասնագետների որակավորման շարունակական բարձրացումը, վարկային տեխնոլոգիաների կատարելագործումը և վարկային նոր պրոդուկտների գործարկումն ու ներդրումը: Հաշվետու տարում իրականացվել է արդեն ավանդույթ դարձած վարկային մասնագետների վերապատրաստման ծրագիրը, որին մասնակցում են ինչպես նոր հավաքագրված աշխատակիցները, այնպես էլ Բանկում գործող մասնագետները: Ծրագրի իրականացման շրջանակներում դասընթացների կազմակերպմանը ներգրավվել են նաև միջազգային խորհրդատվական կազմակերպությունների, մասնավորապես, Բանկի Ինստիտուցիոնալ Զարգացման Ծրագիրն իրականացնող կանադական “CRC Sogema” ընկերության փորձագետները:





## Միջազգային վարկային ծրագրեր

2010թ. Բանկը շարունակել է ակտիվ մասնակցություն ցուցաբերել տարբեր միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից Հայաստանում իրականացվող վարկային ծրագրերում: Դրանց շարքում են եղել Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի (EBRD) միջոցներով իրականացվող, Համաշխարհային Բանկի կողմից տրամադրված փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսական միջոցների հասանելիության, Ռուսաստանի Դաշնության կողմից տրամադրված տնտեսության կայունացման վարկավորման ծրագրերը:

Հաշվետու տարում Բանկն ակտիվորեն շարունակել է նաև համագործակցությունը գերմանական KfW բանկի “Հիփոթեքային շուկայի կայուն զարգացում” և շվեյցարական Իզմիրյան Հիմնադրամի հետ իրականացվող վարկային ծրագրերի շրջանակներում:

Նշված ծրագրերում մասնակցելու և սպասարկելու համար ԱՐԱՐԱՏԲԱՆԿՆ ապահովել է նշված հեղինակավոր միջազգային կազմակերպությունների կողմից վարկավորման համար ներկայացվող չափորոշիչների պահանջները՝ շնորհիվ Բանկում կիրառվող ժամանակակից վարկային տեխնոլոգիաների, փոքր և միջին բիզնեսի վարկավորման ոլորտում հաջողված փորձի, հմուտ և բարձրորակ անձնակազմի:

## Արժեթղթեր

Հաշվետու ֆինանսական տարում Բանկը շարունակել է ակտիվ ներդրումային գործունեություն իրականացնել ՀՀ ֆինանսական ակտիվների շուկայում՝ դրանով իսկ ապահովելով Բանկի համարժեք իրացվելիությունն ու եկամտաբերությունը, ինչպես նաև ապահովել է հաճախորդների պահանջմունքները:

Բանկն առավել ակտիվ է ՀՀ պետական պարտատոմսերի շուկայում, քանի որ հանդիսանում է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ընտրված գործակալ միջնաժամկետ եւ երկարաժամկետ պարտատոմսերի շուկայում և դիլեր ՀՀ ֆինանսների նախարարության եւ Կենտրոնական Բանկի կողմից թողարկված կարճաժամկետ պարտատոմսերի շուկայում:

Հաշվետու ֆինանսական տարում ՀՀ պետական արժեթղթերի շուկայում կատարված գործառնությունների ծավալները կազմել են՝


- առաջնային շուկայում՝ 21,310,629 հազ. ՀՀ դրամ.
- երկրորդային շուկայում՝ 55,571,068 հազ. ՀՀ դրամ:

Նշված գործառնությունների արդյունքում արժեթղթերում Բանկի ներդրումային պորտֆելը կազմել է 5,082,047 հազ. ՀՀ դրամ կամ ընդհանուր ակտիվների 8.1%-ը՝ նախորդ տարվա 6.45%-ի դիմաց:

Ելնելով տնտեսության հետճգնաժամային իրողություններից Բանկի ներդրումային պորտֆելի կառուցվածքի մեծ մասը՝ 69 տոկոսը, բաժին է ընկել 1-3 տարի ժամկետով ՀՀ պետական արժեթղթերին, իսկ կարճաժամկետ պարտատոմսերին բաժին է ընկել պորտֆելի 26.4%-ը:

ՀՀ ֆինանսների նախարարության գործակալի գործառնությունների իրականացման շրջանակներում ԱՐԱՐԱՏԲԱՆԿԸ իրականացնում է պետական պարտատոմսերի պարտադիր գնանշումներ “NASDAQ OMX Armenia” ֆոնդային բորսայում և դրա հետ մեկտեղ՝ պարտատոմսերի առք ու վաճառքի ակտիվ գործառնություններ “NASDAQ OMX Armenia” ֆոնդային բորսայում:

Բանկն էականորեն ավելացրել է նաև Ռեպո պայմանագրերով գործառնությունների ծավալներն ինչպես միջբանկային շուկայում, այնպես էլ Բանկի հաճախորդների հետ կատարվող գործառնություններում: Զուգահեռաբար Բանկը 2010թ. ընթացքում իրականացրել է արժեթղթերով սվոփ գործառնություններ:



\* 2009 թվականի ցուցանիշում ներառված են ներդրումները լուծարված “Իզմիրյան” ՈՒՎԿ-ի բաժնետոմսերում, որը ձեռք է բերվել Բանկի կողմից:

Հաշվետու տարում պետական պարտատոմսերում կատարված ներդրումները, 2009 թվականի համեմատ, աճել են 80.7% և կազմել 5,062,637 հազ. ՀՀ դրամ:

### Արտարժույթային գործառնություններ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿԸ, լինելով “NASDAQ OMX Armenia” ֆոնդային բորսայի անդամ, հաշվետու տարում ակտիվ մասնակցություն է ունեցել ինչպես բորսայի արտարժույթային գործառնությունների հարթակում, այնպես էլ շուկայից դուրս:

Արդյունքում արտարժույթային գործառնությունների ծավալներն ըստ արտարժույթների կազմել են.

ԱՄՆ դոլարով գործարքների ծավալը՝ 513,985 հազ. ԱՄՆ դոլար,

ՌԴ ռուբլով գործարքների ծավալը՝ 2,049,683 հազ. ՌԴ ռուբլի,

Եվրո գործարքների ծավալը՝ 163,695 հազ. Եվրո:

Բանկն իրականացրել է նաև մրցակցային գնանշումներ արտարժույթային միջբանկային շուկայում, որի հետևանքով Բանկի ծառայություններից օգտվել են մի շարք հայկական բանկեր:

Միաժամանակ հաշվետու տարում Բանկը զգալիորեն ավելացրել է նաև արժույթային աճանցյալ գործիքներով գործառնությունների ծավալները, որտեղ գերակշռող մասը կազմել են արժույթային սվոփ գործարքները:


Վերը նշված գործառնությունների արդյունքում, հաշվետու ֆինանսական տարում արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտը կազմել է 437,957 հազ. ՀՀ դրամ:

## Պարտավորություններ

Հաշվետու ֆինանսական տարում նախորդ տարվա համեմատ Բանկի պարտավորությունների աճը (17,170,963 հազ. ՀՀ դրամով) զգալի չափով պայմանավորված է եղել հաճախորդների նկատմամբ պարտավորությունների աճով՝ 54.0%-ով կամ 8,156,665 հազ. ՀՀ դրամով, ինչն արդյունք է Բանկի մասնաճյուղային ցանցի ընդլայնման, գործարար ակտիվության և հանրության առջև ձևավորած վարկանիշի, վստահության և ճանաչելիության:

Որպես բնակչության վստահությունը բնորոշող հիմնական չափանիշ անհրաժեշտ ենք համարում նշել, որ ֆիզիկական անձանցից ներգրավված ժամկետային ավանդների աճը կազմել է 2.5 անգամ:


Ստորև բերվող աղյուսակում պարտավորությունները ներկայացված են նախորդ տարիների համեմատության մեջ:



## Կապիտալ

Հաշվետու տարում Բանկի կապիտալն աճել է 2,311,574 հազ. ՀՀ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ստացված զուտ շահույթի (1,279,174 հազ. ՀՀ դրամ), բաժնետիրական կապիտալի (600,000 հազ. ՀՀ դրամ) և էմիսիոն եկամտի (420,000 հազ. ՀՀ դրամ) աճով:


Ստորև բերվող գրաֆիկում կապիտալը ներկայացված են նախորդ տարիների համեմատության մեջ:



Բանկի կապիտալի աճի արդյունքում 1 բաժնետոմսի հաշվեկշռային արժեքը 31.12.10թ. դրությամբ կազմել է 9,005 դրամ՝ 5,000 ՀՀ դրամ անվանական արժեքի պարագայում:

Բաժնետոմսերի հաշվեկշռային արժեքի աճի դինամիկան ըստ տարիների գրաֆիկորեն ունի հետևյալ պատկերը:

### ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՀԱՇՎԵԿՇՐԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ



## Եկամուտներ և ծախսեր

Հաշվետու տարում, նախորդ տարվա համեմատ, Բանկի տոկոսային և նմանատիպ եկամուտներն աճել են 1,599,267 հազ. ՀՀ դրամով կամ 69.2 %-ով՝ կազմելով 3,910,037 հազ. ՀՀ դրամ:

Բանկի տոկոսային եկամուտների գերակշռող մասը բաժին է ընկել հաճախորդներին տրված վարկերից և փոխառություններից ստացված տոկոսային եկամուտներին (3,208,544 հազ. ՀՀ դրամ կամ 82%), պետական պարտատոմսերից ստացված տոկոսային եկամուտներին (330,735 հազ. ՀՀ դրամ կամ 8.5%) և Ռեպո պայմանագրերից ստացված տոկոսային եկամուտներին (295,270 հազ. ՀՀ դրամ կամ 7.6%):

Հաշվետու տարում Բանկի եկամուտների կազմում ստացված զուտ կոմիսիոն և այլ եկամուտները կազմել են 426,558 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 154,053 հազ. ՀՀ դրամով կամ 56.5%-ով: Վերջինիս աճը պայմանավորված է եղել Բանկի կողմից մատուցվող ծառայությունների տեսականու, միջնորդական գործունեության ծավալային աճով և մասնաճյուղային ցանցի ընդլայնմամբ:


Առևտրային գործառնություններից ստացված զուտ եկամուտը աճել է 272,556 հազ. ՀՀ դրամով կամ 87.8%-ով: Առևտրային գործառնություններից ստացված զուտ եկամտի աճը հիմնականում պայմանավորված է արտարժույթային գործառնություններից ստացված շահույթի աճով:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացվում է Բանկի եկամուտների և ծախսերի դինամիկան նախորդ երկու տարիների կտրվածքով, ինչպես նաև հաշվետու ֆինանսական տարվա եկամուտների կառուցվածքը՝ գրաֆիկական տեսքով:

	2009թ. ավարտված տարվա համար	2010թ. ավարտված տարվա համար
		<b>հազ. ՀՀ դրամ</b>
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	2,310,770	3,910,037
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	(1,001,842)	(1,575,686)
<b>Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ</b>	<b>1,308,928</b>	<b>2,334,351</b>
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	372,222	571,077
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	(99,717)	(144,519)
<b>Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ</b>	<b>272,505</b>	<b>426,558</b>
Զուտ առևտրային եկամուտ	310,285	582,841
Վաճառքի համար մատչելի ներդրումներից զուտ շահույթ	63,378	57,064
Այլ եկամուտ	21,783	139,779

Վարկային կորուստների արժեզրկման ծախս	(58,063)	(119,736)
Անձնակազմի գծով ծախսեր	(704,880)	(915,146)
Հիմնական միջոցների մաշվածություն	(158,289)	(200,531)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	(8,068)	(8,655)
Այլ ծախսեր	(583,016)	(696,910)
<b>Շահույթ/(վնաս) հարկումից առաջ</b>	<b>464,563</b>	<b>1,599,615</b>
<b>Շահութահարկի գծով ծախս</b>	<b>(99,147)</b>	<b>(320,441)</b>
<b>Զուտ շահույթ</b>	<b>365,416</b>	<b>1,279,174</b>

### ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (հազ. ՀՀ դրամ)




Հաշվետու ֆինանսական տարում Բանկի տոկոսային և նմանատիպ ծախսերը կազմել են 1,575,686 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա համեմատ, աճել է 573,844 հազ. ՀՀ դրամով: Ծախսերի զգալի մասը բաժին է ընկնում հաճախորդների բանկային հաշիվների դիմաց կատարված տոկոսային ծախսերին, որը կազմել է 1,290,950 հազ. ՀՀ դրամ:

Հաշվետու ֆինանսական տարում Բանկի անձնակազմի գծով կատարված ծախսերն աճել են 210,266 հազ. ՀՀ դրամով՝ կազմելով 915,146 հազ. ՀՀ դրամ, հիմնական միջոցների մաշվածությունը՝ 42,242 հազ. ՀՀ դրամով՝ կազմելով 200,531 հազ. ՀՀ դրամ, գովազդի գծով ծախսերն աճել են 25,132 հազ. ՀՀ դրամով՝ կազմելով 62,761 հազ. ՀՀ դրամ:

Բանկի կառավարչական ծախսերի աճը հիմնականում պայմանավորված է եղել Բանկի ֆինանսատնտեսական գործունեության ընդլայնման, տեխնիկական վերազինման, նոր մասնաճյուղերի հիմնադրման և աշխատակիցների թվաքանակի ավելացման հետևանքով համապատասխան ծախսերի աճով: Ստորև ներկայացվում է Բանկի 2010 թվականի ծախսերի կառուցվածքը գրաֆիկի տեսքով:

### ԾԱԽՍԵՐ (հազ. ՀՀ դրամ)



### Շահույթ, շահութաբերություն և շահաբաժիններ

Հաշվետու ֆինանսական տարվա արդյունքներով Բանկի զուտ շահույթը կազմել է 1,279,174 հազ. ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 913,758 հազ. ՀՀ դրամով կամ 2.5 անգամ:

Բանկի գործունեության շահութաբերության ցուցանիշները կազմել են՝

ROE (կապիտալի շահութաբերություն)՝ 14.1%,

ROA (ակտիվների շահութաբերություն)՝ 2.9%:

Մեկ բաժնետոմսին ընկնող շահույթի ցուցանիշը (EPS) նախորդ տարվա համեմատ աճել է 144.3%-ով՝ կազմելով 1,123 ՀՀ դրամ:

Նախորդ տարիների ընթացքում Բանկը շահաբաժիններ չի վճարել և ստացված շահույթն ամբողջությամբ ուղղվել է Բանկի կապիտալիզացիային:

2010 թվականի գործունեության արդյունքներով նախատեսվում է իրականացնել շահաբաժինների վճարման քաղաքականություն:

## Ռիսկերի կառավարում

2008-2009 թվականների համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը խորը հետք թողեց միջազգային ֆինանսական շուկայի խոշորագույն ֆինանսական կառույցների վրա: Արդյունքում ռիսկերի կառավարման խնդիրները մղվեցին կառավարման առաջնահերթությունների շարք՝ առաջ քաշելով դրանց կառավարման նոր մոտեցումներ:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ համար ստեղծված իրավիճակում ռիսկերի կառավարման գործուն և արդյունավետ համակարգը հանդիսացավ Բանկի բնականոն զարգացման, պլանավորված ցուցանիշների ապահովման ամենակարևոր բաղադրիչներից մեկը: Առաջնորդվելով դրանով՝ հաշվետու տարվա ընթացքում Բանկում շարունակվել է ռիսկերի կառավարման ոլորտի բարեփոխումների ծրագիրը և համաշխարհային լավագույն փորձին համապատասխանող տեխնոլոգիաների ներդրումը, որի արդյունքում Բանկը հնարավորություն ունի ժամանակին բացահայտելու առաջացող ռիսկերի բնույթը, դրանց հնարավոր ազդեցության մակարդակը և համարժեք կառավարման գործիքակազմով նվազեցնել կամ չեզոքացնել դրանցից սպասվող հնարավոր կորուստները:

Բանկի ղեկավարության համար բանկային ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգի կարևորության վառ դրևորում է հանդիսանում հաշվետու տարում Բանկի կառուցվածքի վերանայման ընթացքում Ռիսկերի կառավարման վարչության ձևավորումը, որն անմիջական պատասխանատվություն է կրում Բանկում ռիսկերի բացահայտման, գնահատման և կառավարման գործընթացների արդյունավետ կազմակերպման համար:

### Վարկային ռիսկ

Բանկի վարկային ներդրումների ծավալների աճի հիմնական նախապայմանը վարկային ռիսկերի արդյունավետ կառավարման համակարգի ձևավորումն է: Բանկում հաշվետու տարվա ընթացքում շարունակվել են նշված ռիսկերի կառավարման մեթոդաբանության արդիականացման և բարելավման, ինչպես նաև բանկում օգտագործվող մոդելների կատարելագործման աշխատանքները:

Դրանց շարքում պետք է առանձնացնել Բանկում արդեն կիրառություն ստացած պոտենցիալ վարկառուի սնանկության հավանականության հաշվարկի մոդելի, պոտենցիալ վարկառուի բալավորման մոդելի, հաճախորդի կառավարման որակի գնահատման մոդելի կիրառումը: Դրանց հետ մեկտեղ փորձարկվեցին և վերջնականապես ներդրվեցին նաև համաշխարհային լավագույն փորձին համապատասխանող վարկառուի ռիսկի գնահատման (BRR) և վարկառուի ապահովվածության որակի գնահատման (FRR) հաշվարկման մոդելները, որոնց կիրառումը հնարավորություն է տալիս սահմանել համապատասխան վարկային տոկոսադրույք յուրաքանչյուր վարկառուի համար՝ հիմք ընդունելով նրա վարկունակությունը և վարկի ապահովվածության որակը:

Դրան զուգահեռ մշակվեց և ներդրվեց նաև բանկի վարկառուների ֆինանսական ցուցանիշների գնահատման ամփոփ համակարգը, որը թույլ կտա իրականացնել անհրաժեշտ վիճակագրական վերլուծություններ:

Վարկային ռիսկի զսպման և նվազեցման կարևոր գործոն հանդիսացավ նաև 2010 թվականի ընթացքում իրականացված Բանկի կառուցվածքի վերանայումը, որի



արդյունքում, ըստ համապատասխան ստորաբաժանումների, տարանջատվեցին կորպորատիվ (բիզնես) և մանրածախ (սպառողական) գործառույթները, ինչն էականորեն բարելավեց վարկավորման գործընթացի որակը՝ դրական ազդեցություն ունենալով նաև հնարավոր ռիսկերի բացահայտման արդյունավետության վրա:

Բանկի Վարկերի մոնիտորինգի խմբի կարողությունների մեծացման միջոցով բարելավվեց նաև վարկերի ընթացիկ հսկողության գործընթացը, ինչը հնարավորություն տվեց ժամանակին բացահայտել և օպերատիվ արձագանքել գործող վարկառուների գործունեության ընթացքում առաջացած կամ հնարավոր ռիսկերին:

Վերը նշված գործիքակազմի ամբողջությունը Բանկում ձևավորել է վարկային ռիսկերի կառավարման բավականաչափ հուսալի համակարգ:

Վարկային պորտֆելի դասակարգումն ըստ ստորև նշված ժամանակահատվածների (%)

Վարկերն ըստ ռիսկայնության	01.04.10թ.	01.07.10թ.	01.10.10թ.	01.01.11թ.
Ստանդարտ	99.6	99.5	99.1	99.7
Հսկվող	0.4	0.4	0.	0.2
Ոչ ստանդարտ	-	-	.1	0.1
Կասկածելի	-	-	-	0.1
Անհուսալի	-	-	-	-

### Իրացվելիության ռիսկ

Բանկի համարժեք իրացվելիության մակարդակի պահպանումը Բանկի հուսալիության, ֆինանսական հնարավոր բարդությունների ահազանգման, հաճախորդների կողմից Բանկի նկատմամբ վստահության առավել կարևոր ազդակներից է: Ռիսկը կառավարելիս Բանկը մշտապես պահպանել է կարգավորող մարմնի կողմից սահմանված ընդհանուր և ընթացիկ իրացվելիության նորմատիվների պահանջները: Այդ նպատակով Բանկը կիրառում է միջազգային բանկային պրակտիկայում իրացվելիության կառավարման դասական գործիքակազմ՝ ներգրավված և տեղաբաշխված միջոցների ժամկետայնության ճեղքվածքի անընդմեջ վարում, ընդ որում՝ հաշվարկի տարրերը տրոհվում են նաև ըստ հիմնական արժույթների: Ընթացիկ իրացվելիության ռիսկի կառավարման ընթացքում դիտարկվում են մեկօրյա, մեկշաբաթյա և մեկամսյա փաստացի և կանխատեսվող ցուցանիշների շարժերը:

Իրացվելիության ռիսկի կառավարելիության առավել հիմնավոր և հուսալի պատկերը ձևավորելու նպատակով Բանկը նաև որոշակի պարբերականությամբ սիմուլյացիոն եղանակով իրականացնում է սթրես թեսթեր, որոնց ընթացքում դիտարկվում են ժամկետային և ցպահանջ միջոցների արտահոսքի՝ տարբեր սցենարների պարագայում առաջացող հնարավոր ռիսկերը:

### Տոկոսադրույքների փոփոխման ռիսկ

Շուկայական ռիսկերի կառավարման առումով Բանկը մշտապես գնահատում և կառավարելիության միջակայքում է պահում տոկոսադրույքների փոփոխման ռիսկը: Ռիսկի գնահատման համար դիտարկվում են ինչպես իրական հատվածի, այնպես էլ մրցակից բանկերի կողմից տոկոսադրույքների ներկայացվող առաջարկի և

պահանջարկի միտումների վերաբերյալ կատարվող պարբերաբար վերլուծությունները: Ռիսկի ազդեցությունը գնահատելու նպատակով առաջնահերթ դիտարկվում են տոկոսադրույքների փոփոխման նկատմամբ զգայուն ակտիվները և պարտավորությունները, որոնց արդյունքում պահանջվել են ներգրավված ու տեղաբաշխվող միջոցների տոկոսային մարժայի Բանկի համար ընդունելի միջակայքերը:

### **Արտարժույթային ռիսկ**

Բանկի կողմից արտարժույթային ռիսկի կառավարումը ենթադրում է արտարժույթային դիրքի կառավարելիության ապահովում, դրանից բխող հեջավորման գործիքների կիրառում: Ռիսկի նվազեցման նպատակով կիրառվում է ինչպես արտարժույթային ակտիվների և պարտավորությունների ճեղքվածքի, այնպես էլ ՎԱՌ գործիքը:

Արտարժույթային դիրքի կառավարումը ենթադրում է արտարժույթի ընդհանուր բաց դիրքի և առաձին արժույթների համար բաց դիրքի, այդ թվում՝ արբիտարժային գործարքների համար սահմանափակի սահմանում և դրանց հսկողության իրականացում ժամանակի իրական ռեժիմով: Դրանք Բանկի որդեգրած մոտեցումներից են:

### **Գործառնական ռիսկ**

Գործառնական ռիսկի կառավարումն իրականացվում է Բանկում մշակված քաղաքականության հիման վրա, որը նպատակաուղղված է ներքին գործընթացների անկատարությունների, անձնակազմի ոչ համարժեք գործողությունների, այդ թվում՝ վրիպումների և սխալների, տեղեկատվական համակարգերի գործառնության բացթողումների և սխալների, ինչպես նաև արտաքին գործոնների ազդեցությամբ ու հետևանքով առաջացող կորուստների կանխարգելմանն ու կանխմանը: Կորուստների կանխարգելման և կանխման նպատակով Բանկում համակողմանիորեն կանոնակարգված են բոլոր բիզնես գործընթացները՝ նշելով յուրաքանչյուր կատարողի լիազորություններն ու պարտավորությունները: Սահմանված են առանձին գործառնությունների ներքին մոնիտորինգի, հսկողության և վերահսկողության գործելակարգերը՝ ըստ անհրաժեշտության սահմանելով առանձին գործարքների սահմանափակի և կիրառելով տեղեկատվության անվտանգության միջոցառումներ: Գործառնական ռիսկի նվազման համար կատարելագործվում են ներքին աուդիտի և ավտոմատացված համակարգերի հսկողության կառուցակարգերը, ապահովագրվում են գույքն ու ակտիվները, մշտապես բարձրացվում է բոլոր մակարդակների աշխատողների որակավորման մակարդակը: Բանկում գործառնական ռիսկի ընթացիկ մակարդակը գնահատվում է ընդունելի մակարդակի:

Բանկում իրականացվում է գործառնական ռիսկային իրադարձությունների վիճակագրություն, որում արտացոլվում են գործառնական ռիսկերի վերաբերյալ տվյալներն ու դրանց հետևանքով կրած վնասների չափը: Այդ նպատակով Բանկի յուրաքանչյուր կառուցվածքային ստորաբաժանման կազմում նշանակված է համապատասխան պատասխանատու անձ, որը բացահայտում, գրանցում և հաշվառում է տվյալ ստորաբաժանման գործունեության ընթացքում ի հայտ եկած կամ հավանական գործառնական ռիսկերը, որոնց վերաբերյալ այնուհետև շաբաթական կտրվածքով ներկայացնում են հաշվետվություններ գործառնական ռիսկի առաջացման դեպքերի վերաբերյալ: Ներկայացված հաշվետվությունները վերլուծվում են Ռիսկերի կառավարման վարչության կողմից՝ համապատասխան կանխարգելիչ միջոցառումների մշակման, անհրաժեշտ ծրագրերի կազմման և ապագայում նման դեպքերի բացառման

նպատակով:

Բանկի ռիսկերի համարժեք կառավարման առումով կարևոր դերակատարում է ունեցել Ակտիվների և պասիվների կառավարման հանձնաժողովի գործունեությունը, որը, գործելով սահմանված ռազմավարության ներքո, ապահովել է Բանկի ֆինանսական միջոցների կառուցվածքի, ժամկետայնության, եկամտաբերության պահպանման և ֆինանսական ռիսկերի հավասարակշռման գործառույթները:

### **Ներքին հսկողության համակարգ**

Բանկում հատուկ ուշադրություն է դարձվում ներքին հսկողության համակարգի զարգացմանը և արդյունավետության բարձրացմանը: Համակարգը կոչված է Բանկի կազմակերպական կառուցվածքի, համապատասխան գործընթացների և միջոցառումների իրականացման միջոցով պահպանելու Բանկի ակտիվները, ապահովելու հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը, բարձրացնելու իրականացվող գործառնությունների արդյունավետությունը, ապահովելու Բանկի գործունեության համապատասխանությունը գործող օրենսդրությանը, այլ իրավական, ինչպես նաև Բանկի կառավարման իրավասու մարմնի կողմից հաստատված ներքին իրավական ակտերին:

Ներքին հսկողության համակարգը կոչված է ապահովելու հետևյալ նպատակների իրագործումը.

- Բանկի գործունեության համապատասխանություն ՀՀ օրենքների, այլ իրավական ակտերի և ներքին կարգերի պահանջներին,
- գործունեությանը բնորոշ ռիսկերի ժամանակին բացահայտում, գնահատում և շարունակական կառավարում,
- Բանկի գործունեության և շուկայի միտումներից ելնելով՝ ներքին իրավական ակտերի պարբերաբար թարմացում,
- որոշումների կայացման համար անհրաժեշտ և ամբողջական տեղեկատվության տրամադրում, Բանկի ներսում տեղեկատվության անհրաժեշտ հոսքերի ապահովում,
- ֆինանսական եւ այլ հաշվետվությունների արժանահավատության ու ամբողջականության ապահովում,
- անձնակազմի արդյունավետ կառավարում,
- Բանկի անխափան գործունեության շարունակականության ապահովում:

Ներքին հսկողության համակարգի նկատմամբ հսկողությունը և մոնիտորինգն իրականացվում է Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից՝ ուսումնասիրությունների և ստուգումների միջոցով: Ներքին աուդիտը պարբերաբար հաշվետվություններ է ներկայացնում Բանկի Խորհրդին և Գործադիր մարմնին ներքին հսկողության համակարգի աշխատանքի և արդյունավետության վերաբերյալ:

Այսպես, հաշվետու տարվա ընթացքում Ներքին աուդիտի կողմից բանկի տարածքային եւ կառուցվածքային ստորաբաժանումներում իրականացվել են թվով 11 համալիր եւ 73 նպատակային ստուգումներ, ինչպես նաև վեց տասնյակից ավել գույքագրումներ եւ տարբեր ոլորտների ուսումնասիրություններ: Մասնավորապես, իրականացվել է.

- գործադիր մարմնի, տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների կողմից օրենքների, այլ իրավական ակտերի, ներքին իրավական ակտերի

պահանջների և տրված հանձնարարականների կատարման նկատմամբ հսկողություն,

- ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգերի գնահատում,
- հաճախորդների սպասարկման որակի գնահատում,
- ներքին տեղեկատվական ու հաշվողական համակարգերի գնահատում,
- կատարված գործարքների, դրանց հաշվապահական ձևակերպումների և ձևակերպումների համար հիմք հանդիսացող փաստաթղթերի համապատասխանության պարբերական ստուգում, այդ թվում՝ իրական ժամանակի (online) ռեժիմում,
- կատարված ծախսերի նպատակայնության գնահատում,
- փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացման ստուգում,
- հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության և ամբողջականության գնահատում,
- հետստուգումային հսկողություն՝ կատարված ստուգումների արդյունքներում բացահայտված խնդիրների վերացման և տրված հանձնարարականների կատարման նկատմամբ,

Բանկի անձնակազմի գործունեությունն ամբողջությամբ նպատակաուղղված է եղել բացահայտված խնդիրների վերացմանը, ռիսկերի կառավարման արդյունավետության բարձրացմանը, կանխարգելիչ միջոցառումների մշակմանը և, որպես հետևանք, Բանկի գործունեության ընդհանուր ռիսկայնության նվազեցմանն ու արդյունավետ ներքին հսկողության համակարգի ապահովմանը:

Կարելի է փաստել, որ վերը նշված գործառույթների իրականացման արդյունքում Բանկում ձևավորվել է առողջ, արդյունավետ եւ կառավարելի ներքին հսկողական համակարգ:

## Ծառայություններ և հաճախորդներ

2010 թվականին Բանկն էապես ընդլայնել է հաճախորդների վճարահաշվարկային ծառայությունների մատուցման ծավալները՝ ապահովելով հաճախորդների կողմից պահանջվող գործարքների արագ ու որակյալ սպասարկում: Բանկի մասնաճյուղային ցանցի շարունակական ընդլայնումը նպաստել է բնակչության կողմից կատարվող բազմաբնույթ կոմունալ վճարումների հավաքագրմանը: Հաշվետու տարում նախորդ տարվա համեմատ կոմունալ հավաքագրումների և կապի օպերատորների մատուցած ծառայությունների դիմաց վճարումներն աճել են 42.1%-ով՝ կազմելով 2.7 մլրդ. դրամ:

Բանկի վճարահաշվարկային գործառնությունների ծավալների աճի մասին է վկայում 2010թ. նախորդ տարվա համեմատ ստացված զուտ կոմիսիոն և այլ եկամուտների 56.5 % աճը:

Ծառայությունների սպասարկման որակի ապահովման նպատակով Բանկում հաճախակի իրականացվում են դիտարկումներ և հաճախորդների շրջանում անցկացվում են հարցումներ, պարբերաբար իրականացվում են հանդիպումներ հաճախորդների նպատակային խմբերի հետ՝ բացահայտելով առաջացած խնդիրներն ու հավաքելով առաջարկությունները բանկի կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ: Հաճախորդների սպասարկման որակի բացահայտման առումով Բանկի ղեկավարության մշտական ուշադրության կենտրոնում է սպասարկող աշխատակիցների գործունեությունը, որոնց աշխատանքի որակն ուղղակի հարաբերակցության մեջ է հաճախորդների թվի աճի հետ: Սպասարկման որակի մակարդակը բացահայտելու նպատակով Բանկում կազմակերպվում են նաև “Mystery Shopping” մեթոդաբանության հիման վրա կառուցված ուսումնասիրություններ:

Նշված միջոցառումների միջոցով ապահովվում է հաճախորդների հետ տարվող աշխատանքների հետադարձ կապը, ժամանակին արձագանք է կատարվում մատուցվող ծառայությունների բարելավման խնդիրներին: Արդյունքում Բանկը ապահովում է բանկային սպասարկումների շուկայում նոր միտումների, ինչպես նաև բացթողումների բացահայտումը, սպասարկման որակի շարունակական բարելավումը, որի արդյունքը հաճախորդների քանակի և Բանկի եկամտաբերության արձանագրված աճն է:

Մանրաձախ ֆինանսական ծառայությունների զարգացման ոլորտում Բանկը կարևորում է միջազգային արագ դրամական փոխանցումների տեսականու բազմազանեցումը, որը հնարավորություն է տալիս ընդլայնել այդ սպասարկման աշխարհագրությունը և հաճախորդներին առաջարկել այլընտրանքի հնարավորություն: 2010 թվականին Բանկն իրականացնում էր այդ գործառնությունները թվով 10 միջազգային դրամական փոխանցումների համակարգերով, որոնց շարքում են՝ “Անելիք”, “Migom”, “BTF-Soyuz”, “PrivatMoney”, “Blizko”, “Быстрая почта”, “Avers”, “XpressMoney” “Contact” և “Золотая Корона” համակարգերը: Արդյունքում, միջազգային փոխանցումների ծավալը կազմել է 136.8 մլրդ. ՀՀ դրամ:

Ծառայությունների բազմազանման, սպասարկման որակի բարելավման արդյունքում, զգալիորեն ընդլայնվել է հաճախորդների շրջանակը: 2010 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի գործող հաճախորդների թվաքանակը կազմել է 93,523, որը 2009 թ. դեկտեմբերի 31-ի համեմատ աճել է 27,400-ով կամ 41.4%-ով:

Բանկի ծառայությունների և սպասարկումների մրցունակության բարձրացման գործում կարևոր դերակատարում է ունեցել մշտապես գործող նախաձեռնողական խմբի

գործունեությունը, որում ընդգրկված են Բանկի տարբեր ստորաբաժանումների ներկայացուցիչներ: Խմբի անդամները առաջարկություններ են մշակում, ինչպես Բանկի մատուցվող ծառայությունների, այնպես էլ նոր պրոդուկտների վերաբերյալ, հիմնվելով մրցակից բանկերի կողմից կիրառվող ծառայությունների ու սպասարկումների, ինչպես նաև միջազգային բանկային պրակտիկայում կիրառվող փորձի վրա:

## **Վճարահաշվարկային գործառնություններ**

### **Փաստաթղթային գործառնություններ**

Հաշվետու ֆինանսական տարվա ընթացքում Բանկը լուրջ քայլեր է ձեռնարկել փաստաթղթային գործառնությունների ծավալների ընդլայնման ուղղությամբ՝ փաստաթղթային գործառնությունների ընդհանուր ծավալը կազմել է 9,694 հազ. ԱՄՆ դոլար, ինչը նախորդ տարվա համեմատ աճել է 2.5 անգամ: Տալով Բանկի ակտիվությանը արժանի գնահատական և կարևորելով համագործակցությունը մեր թղթակիցը՝ Commerzbank AG-ին տրամադրել է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ին հաստատվող փաստաթղթային գործառնությունների սահմանաչափ 1 մլն Եվրոի չափով:

Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի հետ համատեղ իրականացնելով Միջազգային Առևտրի խթանման ծրագիրը (TFP) Բանկը թողարկել է փաստաթղթային գործիքներ ընդհանուր 2,576 հազ ԱՄՆ դոլարի, գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը 5 անգամ: Առևտրի խթանման ծրագրի շրջանակում ներդրվել է նոր գործիք Վերականգնվող վարկային պայմանագիր (RCA) ուղղված ներմուծման գործարքների ֆինանսավորմանը: Ծրագիրը հաջողությամբ իրականացվել է, ինչի մասին է փաստում ծրագրով նախատեսված սահմանաչափի ավելացումը ՎՋԵԲ-ի կողմից 1.5 անգամ:

### **Չեկեր**

Բանկը Հայաստանի այն փոքրաթիվ բանկերի ցանկում է, որոնք հանդիսանում են American Express Travel Related Services Company Inc կազմակերպության գործընկերը և սպասարկում ու տրամադրում են ճանապարհային չեկեր: Հաշվետու տարում Բանկը սպասարկել է թվով 542 ճանապարհային չեկ նախորդ տարվա 343-ի դիմաց:

Բանկը նաև սպասարկում է բանկային չեկեր: Հաշվետու տարում սպասարկվել է թվով 29 չեկ, այդ թվում ֆրանսիական AXA ապահովագրական ընկերության կողմից Հայոց ցեղասպանության զոհ և տուժած համարված ավանդատուների իրավահաջորդներին տրամադրված 13,092 ԱՄՆ դոլարի չեկեր:

### **Միջազգային դրամական փոխանցումներ**

Հաշվետու տարում Բանկը ընդլայնեց իր մասնակցությունը միջազգային դրամական փոխանցումների համակարգերի ոլորտում միանալով “Զոլոտայա Կոռոնա” և “Կոնտակտ” համակարգերին: Ստորագրվել է պայմանագիր “Բիստրայա պոչտա” արագ դրամային փոխանցումների համակարգի հետ ՌԴ ռուբլով սպասարկման վերաբերյալ: Միևնույն ժամանակ “Անելիք” փոխանցումների համակարգով Բանկը անցում կատարեց իրական ժամանակով գործելակարգին, սպասարկելով ՌԴ ռուբլու,

ԱՄՆ դոլարի և եվրոյի փոխանցումները: Ներկայումս Բանկը համագործակցում է թվով 10 արագ դրամական փոխանցումների համակարգերի հետ: Բանկի “Մաշտոց” մասնաճյուղը մասնագիտացած է MoneyGram համակարգի սպասարկման ոլորտում, միևնույն ժամանակ Բանկի բոլոր 33 մասնաճյուղերը լիարժեք մատուցում են արագ դրամական փոխանցման ծառայությունները բոլոր 10 համակարգերով, ապահովելով հաճախորդների արագ սպասարկումը:

Միջազգային դրամական փոխանցումների համակարգերով հաճախորդների խրախուսման նպատակով Բանկը արդեն երկու տարի կիրառում է ARARATTRANSFER բոնուսային քարտային ծրագիրը, որի շահառուներն են միջազգային դրամական փոխանցումներ իրականացնող հաճախորդները, որոնք հետագայում օգտվում են Բանկի ծառայությունների գեղջերից և հնարավորություն ունեն ստանալու նաև դրամական շահումներ: Հաշվետու տարում Բանկը նախաձեռնեց ևս մեկ հարմարավետ ծառայություն, արագ դրամական փոխանցումների համակարգերով վճարումների արտահանումը և մուտքագրումը քարտային հաշվին՝ հաճախորդի իդենտիֆիկացվող հեռախոսազանգի հիման վրա:

Հաշվետու տարում իրագործված միջոցառումների արդյունքում Բանկի կողմից իրականացված արագ դրամական փոխանցումների ծավալները կազմեցին 37,923 հազ. ԱՄՆ դոլար, 40% աճ ապահովելով նախորդ տարվա նկատմամբ, միևնույն ժամանակ քանակային արտահայտությամբ իրականացված գործարքների քանակաը կազմել է 62,503 հատ, նախորդ տարվա 28,497-ի դիմաց:

Բանկը հաճախորդների համար մրցունակ պայմաններ է առաջարկում նաև SWIFT համակարգով փոխանցումների համար: Մրցունակ սակագների և սպասարկման բարձր որակի շնորհիվ հաշվետու տարում SWIFT համակարգով փոխանցումների ծավալը կազմեց 292,022 հազ ԱՄՆ դոլար գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը 16.2 %-ով:

Բանկի դրամական փոխանցումների տարբեր համակարգերի լայն ընտրության շնորհիվ մեր հաճախորդները ներկայումս հնարավորություն ունեն փոխանցումներ կատարել և գումարներ ստանալ աշխարհի ավելի քան 180 երկրներից:

## **Պլաստիկ քարտեր**

Վերջին տարիների ընթացքում պլաստիկ քարտերի սպասարկման ոլորտը Բանկի գերակա ոլորտներից է, որի ընդլայնման նպատակով Բանկը զարգացնում է տեխնիկական բազան՝ բանկոմատների, կանխիկացման և առևտրի սպասարկման կետերի թիվը և սպասարկման կետերի ցանցը, յուրացնում է արդի նոր տեխնոլոգիաներ, հաճախորդների ցանցն ընդլայնում է՝ առաջարկելով քարտերի միջոցով վարկավորման և այլ համատեղված սպասարկումներ, բոնուսային ծրագրեր:

Միջազգային ասպարեզում Բանկը համագործակցություն է հաստատել “Visa international” միջազգային վճարային համակարգի հետ և պայմանագիր կնքելով՝ աշխատանքներ է իրականացնում “Diners Club” հեղինակավոր միջազգային համակարգին միանալու համար: 2010 թվականի տարեվերջին Բանկը նախապատրաստեց Visa Electron, Visa Classic, Visa AutoCard և Visa Gold քարտերի թողարկումը: Հաշվետու տարում ներդրվեց Բանկի էլեկտրոնային կայքի միջոցով պլաստիկ քարտերի հայտերի ընդունման և հետագայում հաճախորդներին տրամադրման համակարգը:

Բանկը 2010 թվականին շարունակել է զարգացնել ժամանակակից Mifare (առանց կոնտակտի) տեխնոլոգիայի վրա հիմնված երկակի կիրառման (Dual) քարտերի խմբի նոր պրոդուկտների ներդրումը: Արդեն իսկ տարածում ստացած “Classic-M” քարտի հետ, որն “Արքա” համակարգի վճարային քարտով հնարավորություն է տալիս վճարել Երևանի մետրոպոլիտենում ուղևորությունների համար, մշակվել և ներդրման փուլում է “VISA” համակարգի միջազգային վճարային բանկային քարտի հիմքով երկակի կիրառման “Visa Autocard” պրոդուկտը: Այն նախատեսված է բենզալցակայաններում քարտերի միջոցով վառելանյութի վճարումներ կատարելու համար: Քարտն ունի բարձր պաշտպանվածության աստիճան, ապահովված է միկրոչիպով, ունի մեծածավալ անհատական ինֆորմացիայի պահպանման հնարավորություն, ինչպես նաև հնարավորություն է տալիս հաշվետվություններ ստանալ լիցքավորման քանակի, տեղի և ժամի վերաբերյալ (օրական, շաբաթական, ամսական):

Հաշվետու տարվա ընթացքում Բանկի կողմից թողարկված տեղական և միջազգային վճարային քարտերի քանակն աճել է 14,312 հատով՝ տարեվերջին կազմելով 52,452 հատ կամ շուկայում թողարկված քարտերի 10.0%-ը:

2010 թվականի վերջի դրությամբ Բանկի սպասարկման ցանցը ներառում է 185 առևտրի ու սպասարկման կետեր և բանկոմատներ: Բանկոմատների և կանխիկացման կետերի միջոցով Բանկի քարտապանների կողմից կատարված կանխիկացման գործարքների գումարը կազմել է 27.5 մլրդ. ՀՀ դրամ, իսկ անկանխիկ գործարքների ծավալը՝ 5.0 մլրդ. դրամ:

### **Կադրային քաղաքականություն**

Բանկի ղեկավարության անմիջական ուշադրության կենտրոնում են անձնակազմի կառավարման հետ կապված խնդիրները՝ ելնելով նրանից, որ Բանկի հիմնական ռեսուրսը նրա կադրային պոտենցիալն է: Բանկում ձևավորվել է արհեստավարժների և համախոհների միասնական թիմ, որն ունակ է ապահովելու նպատակադրված խնդիրների ամբողջական իրագործումը և դրանց գործածման փուլում հետադարձ կապի ապահովումը:

2010 թվականին անձնակազմի մասնագիտական գիտելիքների բարձրացման և հմտությունների ու ունակությունների կատարելագործման նպատակով Բանկի վարչության կողմից հաստատվել և տարվա ընթացքում իրականացվել է աշխատակազմի մասնագիտական վերապատրաստման ծրագիր, որի շրջանակներում կազմակերպվել են շուրջ 30 դասընթացներ, սեմինարներ, քննարկումներ տարբեր կառավարման օղակների և սպասարկող անձնակազմի համար: Առանձին ղեկավար օղակների համար նշված սեմինարներին և քննարկումներին մասնակցել են նաև Բանկի հետ համագործակցող միջազգային “CRC Sogema” ընկերության խորհրդատուները: Բանկի ղեկավար անձնակազմի թվով 7 անձիք գործնական այցի ընթացքում ծանոթացել են և ուսումնասիրել գործընկեր կանադական “National Bank of Canada” բանկում գործող կառավարման համակարգերին և առանձին բանկային գործառնությունների տեխնոլոգիաներին:

Բանկում միաժամանակ տարվա ընթացքում իրականացվել են հաճախորդների սպասարկող օղակների աշխատակիցների մասնագիտական համապատասխանության ուսումնասիրություններ, որոնց արդյունքում բացահայտվել են առկա բացթողումներն ու թերությունները և համարժեք միջոցառումներ են ձեռնարկվել աշխատակիցների մասնագիտական ունակությունները և հաճախորդների սպասարկման գործառնությունների



որակը բարձրացնելու նպատակով:

Բանկի հնստիտուցիոնալ Ջարգացման Ծրագրի կարևոր բաղադրիչներից է անձնակազմի կառավարման ոլորտը կանոնակարգող ներքին նորմատիվ ակտերի կանոնակարգվածության համարժեք մակարդակի ապահովումը՝ հիմնված միջազգային չափորոշիչների և բիզնես մշակույթի նորմերի վրա:

Բանկում առանձին կառուցակարգով է իրականացվում նոր աշխատակիցների հավաքագրման գործընթացը, որի նպատակն է օբյեկտիվորեն և անկողմնակալ կարգով պարզել հավակնորդների մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները:

31.12.10թ. դրությամբ Բանկում աշխատում է 391 աշխատակից:

Բանկի աշխատակազմն ըստ տարիքային ընտրված խմբերի ունի հետևյալ կառուցվածքը՝

- մինչև 30 տարեկան աշխատակիցների թիվը կազմում է 212, կամ ընդհանուրի 54.2%-ը,
- 30-45 տարեկան աշխատակիցների թիվը՝ 113, կամ ընդհանուրի 28.9%-ը,
- 45-ից բարձր աշխատակիցների թիվը՝ 66, կամ ընդհանուրի 16.9%-ը:

Բանկի աշխատակիցներից 150-ը կանայք են, իսկ 241-ը՝ տղամարդ:

Բանկում աշխատանքի արդյունավետ կազմակերպման կարևոր գործոններից է մասնագետների՝ ֆինանսաբանկային համակարգում աշխատանքային փորձի առկայությունը: Բանկում գործառնական գործունեությունում ընդգրկված 319 անձանցից բաղկացած աշխատակազմի կառուցվածքն ըստ աշխատանքային տարիների ունի հետևյալ պատկերը՝

- մինչև 5 տարվա աշխատանքային փորձ ունեցող աշխատակիցների թիվը կազմում է 240 կամ ընդհանուրի 75.2%-ը,
- 5-ից 10 տարվա աշխատանքային փորձ ունեցող աշխատակիցների թիվը կազմում է 37 կամ ընդհանուրի 11.6%-ը,
- 10 տարուց ավելի աշխատանքային փորձ ունեցող աշխատակիցների թիվը կազմում է 42 կամ ընդհանուրի 13.2%-ը:

## Տարածքային գործունեություն

2010 թվականին Բանկը շարունակեց իր տարածքային զարգացման քաղաքականությունն ուղղված ՀՀ տարածքում մասնաճյուղային ցանցի ընդլայնմանը՝ դրանում ներառելով զարգացման ներուժ և բանկային ծառայությունների պահանջարկ ունեցող տարածաշրջանները:

Բանկի տարածքային ցանցի զարգացման արդյունավետությունը մեծապես պայմանավորված է գործող մասնաճյուղերի գործունեության ընդլայնմամբ, ծառայությունների որակի բարձրացմամբ, նրանց առկա գործառույթների առավել մեծ ծավալների պատվիրակմամբ և ինքնուրույնության առավել մեծ աստիճանի ձեռք բերմամբ: Բանկի տարածքային ցանցի զարգացման արդյունավետ քաղաքականության մասին է վկայում 2009-10 թվականների ընթացքում ստեղծված 8 մասնաճյուղերի հաջող գործունեությունը:

2010 թվականի ընթացքում ամրապնդվել է նաև գործող մասնաճյուղերի կադրերի որակավորման մակարդակի բարձրացումը, նյութատեխնիկական բազան: Միջոցներ են հատկացվել մի շարք մասնաճյուղերի կապիտալ վերանորոգման և տեխնիկական վերազինման նպատակով, որի արդյունքում բարելավվել են Բանկի աշխատակազմի

աշխատանքային, ինչպես նաև հաճախորդների սպասարկման պայմանները, նվազել է մեկ գործառույթի և մեկ հաճախորդի սպասարկման ժամանակի տևողությունը:

Բանկի մասնաճյուղային ցանցի ընդլայնման ծրագիրը կրելու է շարունակական բնույթ՝ նպատակ ունենալով ընդլայնել Բանկի գործունեության աշխարհագրությունը և մոտեցնել Բանկի սպասարկումն ու ծառայությունները հաճախորդների առավել լայն զանգվածի:

## Ամփոփ ֆինանսական տվյալներ

Ցուցանիշի անվանումը	2009 թվ.	2010 թվ.
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	365,416	1,279,174
Սեփական կապիտալի միջին մեծություն	7,541,215	9,082,042
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE), %	4.8	14.1
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	365,416	1,279,174
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	32,649,492	44,739,056
Ակտիվների շահութաբերություն (ROA), %	1.1	2.9
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	365,416	1,279,174
Գործառնական եկամուտ	1,976,879	3,540,593
Զուտ շահույթի մարժա (NPM), %	18.5	36.1
Գործառնական եկամուտ	1,976,879	3,540,593
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	32,649,492	44,739,056
Ակտիվների օգտագործման գործակից (AU), %	6.1	7.9
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	32,649,492	44,739,056
Սեփական կապիտալի միջին մեծություն	7,541,215	9,082,042
Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM)	4.3	4.9
Զուտ տոկոսային եկամուտ	1,308,928	2,334,351
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	20,248,318	34,811,570
Զուտ տոկոսային մարժա (NIM)	6.5	6.7
Տոկոսային եկամուտ	2,310,770	3,910,037
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	20,248,318	34,811,570
Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն	11.4	11.2

Տոկոսային ծախսեր	1,001,842	1,575,686
Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	19,969,062	26,448,634
Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	5.0	5.9
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	365,416	1,279,174
Բաժնետոմսերի միջին կշռված թիվը	1,072	1,192
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	340.7	1,073
Սպրեդ, %	6.4	5.3

## **Բանկի հետագա զարգացման նկարագիրը**

Բանկի հեռանկարային զարգացման խնդիրները նպատակաուղղված են լինելու ձեռք բերված դրական միտումների շարունակականության ապահովմանը: Բանկը առաջնահերթ կարևորում է հաճախորդների հետ փոխշահավետ համագործակցության պահպանումն ու ընդլայնումը: Այդ նպատակով Բանկը առավել մատչելի կդարձնի մատուցվող սպասարկումներն ու ծառայությունները, հաճախորդներին առաջարկելով ֆինանսական ծառայությունների բավարարման ամբողջական փաթեթային լուծումներ:

Բանկի զարգացման կարևոր բաղադրիչներից է միջազգային գործընկեր ֆինանսական կառույցների հետ համագործակցության ընդլայնումը՝ նպատակ ունենալով ապահովելու բանկային ծառայությունների և սպասարկումների որակի համապատասխանեցումը միջազգային չափորոշիչներին և բանկային ինովացիոն պրոդուկտների ներդրումն ու Բանկի մրցունակության մակարդակի բարձրացումը:

Բանկի հետագա զարգացման նպատակով, շեշտադրվելու են հետևյալ խնդիրները.

- Բանկի ընդհանուր ակտիվների աճի ապահովում, հիմնականում եկամտաբեր ակտիվների հաշվին, որոնց գերակշռող մասը կազմելու են վարկային ներդրումները

- Ակտիվների աճին զուգահեռաբար Բանկի հիմնական խնդիրներից է պարտավորությունների աճի ապահովումը, հիմնականում ի հաշիվ քաղաքացիներից ներգրավվող ժամկետային ավանդների, ինչպես նաև տնտեսվարողների ցպահանջ և ժամկետային ավանդների հաշվին

- Բանկի կապիտալիզացիայի մակարդակի բարձրացումը, որը ընթանալու է ինչպես բաժնետոմսերի նոր թողարկման, այնպես էլ շահույթի աճի հաշվին

- Միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ համագործակցության հետագա խորացումն ու ընդլայնումը և առավել մատչելի պայմաններով երկարաժամկետ միջոցների ներգրավումը

- Բանկի վարկավորման համակարգի հետագա զարգացում՝ վարկավորման նոր տեսակների ներդրմամբ և Բանկի մասնաճյուղերի կողմից վարկավորման ծավալների մեծացմամբ

- Բանկի ոչ տոկոսային եկամուտների աճ, ի հաշիվ միջնորդական և վճարահաշվարկային ծառայությունների ընդլայնման, այդ թվում՝ պլաստիկ քարտերով գործառնությունների, կոմունալ վճարումների ծավալների մեծացման և ծառայությունների սպասարկման որակի բարձրացման:

- Բանկը կշարունակի տարածաշրջանային զարգացման քաղաքականությունը, ընդլայնելով մասնաճյուղերի ցանցը և մոտեցնելով իր սպասարկումներն ու ծառայությունները տնտեսվարողներին ու քաղաքացիներին բոլոր տարածաշրջաններում:

- Վերը նշված ուղղություններով համալիր միջոցառումների իրականացումը կապահովի նաև Բանկի զուտ շահույթի աճը, բաժնետոմսերի եկամտաբերության բարձրացումը:



Գրասրահ Թորնթոն ՓԲԸ  
ՀՀ, ք. Երևան 0012  
Վաղարշյան 8/1

Ֆ. +374 10 260 964  
Ֆ. +374 10 260 961

Grant Thornton CJSC  
8/1 Vagharshtyan Str.  
0012 Yerevan, Armenia

T +374 10 260 964  
F +374 10 260 961

[www.gta.am](http://www.gta.am)

## Անկախ աուդիտորի եզրակացություն

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի -ի բաժնետերերին և խորհրդին.

Մենք ստուգել ենք ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի (այսուհետ՝ «Բանկ») կից ներկայացվող համառոտ ֆինանսական հաշվետվությունների (որոնք ներառում են 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համառոտ հաշվետվությունը, ինչպես նաև նույն ամսաթվին ավարտված տարվա համար համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համառոտ հաշվետվությունները) համապատասխանությունը Բանկի՝ 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա ամբողջական ֆինանսական հաշվետվությունների հետ՝ համաձայն Աուդիտի միջազգային ստանդարտների:

Բանկի ղեկավարությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու և արժանահավատորեն ներկայացնելու համար: Մեր պատասխանատվությունն է ստուգել սույն համառոտ ֆինանսական հաշվետվությունների համապատասխանությունը վերոհիշյալ ամբողջական ֆինանսական հաշվետվությունների հետ:

Ի հավելումն, մենք աուդիտի ենք ենթարկել Բանկի 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա ամբողջական ֆինանսական հաշվետվությունները՝ պատրաստված համաձայն Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների, և 2011թ. մարտի 22 ամսաթվով թվագրված մեր եզրակացությունում մենք ներկայացրել ենք դրական եզրակացություն ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մեր կարծիքով, կից ներկայացվող համառոտ ֆինանսական հաշվետվությունները ճշգրտորեն են ստացվել Բանկի ամբողջական ֆինանսական հաշվետվություններից:

2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ֆինանսական վիճակի, գործունեության արդյունքների, ինչպես նաև աուդիտի շրջանակների վերաբերյալ ավելի լավ պատկերացում կազմելու համար համառոտ ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկել դրանց ստացման համար հիմք հանդիսացող ֆինանսական հաշվետվությունների, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեր աուդիտորական եզրակացության հետ համատեղ:

Գագիկ Գյուլբուրադյան  
Տնօրեն/բաժնետեր

Էրուսյակ Թեյլան  
Աուդիտոր

A handwritten signature in dark ink, appearing to be 'Erusyak Teilyan'.

22 մարտի, 2011թ.  
ք. Երևան

## Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Բազառ ԲԲ ղրաճ	2010թ. դեկ.31-ին ավարտված տարվա համար	2009թ. դեկ.31-ին ավարտված տարվա համար
<b>Տոկոսային և ճանապարհ եկամուտներ</b>	<b>3,910,037</b>	<b>2,310,770</b>
Տոկոսային և ճանապարհ ծախսեր	(1,575,686)	(1,001,842)
<b>Ցուտ տոկոսային եկամուտներ</b>	<b>2,334,351</b>	<b>1,308,928</b>
<b>Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ</b>	<b>571,077</b>	<b>372,222</b>
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	(144,519)	(99,717)
<b>Ցուտ կոմիսիոն և այլ եկամուտներ</b>	<b>426,558</b>	<b>272,505</b>
<b>Ցուտ առևտրային եկամուտ</b>	<b>582,841</b>	<b>310,285</b>
Վաճառքի համար մատչելի ճեղքումներից զուտ շահույթ	57,064	63,378
Այլ եկամուտներ	139,779	21,783
Վարկային կորուստների արժեզրկման ծախս	(119,736)	(58,063)
Աճանաչագծի գծով ծախսեր	(915,146)	(704,880)
Գիծնական միջոցների մաշվածություն	(200,531)	(158,289)
Ոչ ճյուղական ակտիվների անորոշիզացիա	(8,655)	(8,068)
Այլ ծախսեր	(696,910)	(583,016)
<b>Շահույթ մինչև հարկում</b>	<b>1,599,615</b>	<b>484,563</b>
Շահութահարկի գծով ծախս	(320,441)	(99,147)
<b>Տարվա շահույթ</b>	<b>1,279,174</b>	<b>385,416</b>
<b>Այլ համապարփակ եկամուտ</b>		
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ օգուտ	120,926	154,786
Վաճառքի համար մատչելի ճեղքումների իրացումից ֆինանսական արդյունքին փոխանցված զուտ օգուտ	(105,426)	(99,643)
Այլ համապարփակ եկամուտին վերաբերող բարելավուցիչ մասի շահութահարկ	(3,100)	(16,175)
<b>Տարվա այլ համապարփակ եկամուտ առանց հարկերի</b>	<b>12,400</b>	<b>38,968</b>
<b>Ըճյամբեց տարվա համապարփակ եկամուտ</b>	<b>1,291,574</b>	<b>404,384</b>
<b>Մեկ բաժնետոմսին ընկնող շահույթ</b>		
Բազային	1.1	0.3



## Ֆինանսական փճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	2010թ. դեկ. 31-ի դրությամբ	2009թ. դեկ. 31-ի դրությամբ
<b>ԱՎՏԻՎՆԵՐ</b>		
Ղեկավարական միջոցներ և սնանկորդներ ՀՀ կենտրոնական բանկում	19,974,958	16,268,959
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	10,315,512	4,721,252
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	25,264,384	16,096,190
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	5,082,047	4,923,181
Կանխավճարներ շահութահառկի գծով	-	11,797
Հիմնական միջոցներ	1,709,084	1,153,515
Ոչ նյութական ակտիվներ	154,504	46,407
Այլ ակտիվներ	448,057	244,708
<b>ԸՆդամենը՝ ակտիվներ</b>	<b>62,948,546</b>	<b>43,466,009</b>
<b>ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱՎԱՆ ԿԱՊԻՏԱԼ</b>		
<b>Պարտավորություններ</b>		
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	7,520,685	9,412,771
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	44,403,852	25,725,656
Թողարկված արտոնային արժեթղթեր	250,274	260,205
Ընթացիկ հարկի գծով պարտավորություն	231,439	-
Հետաձգված հարկային պարտավորություն	8,582	6,172
Այլ պարտավորություններ	273,154	122,219
<b>ԸՆդամենը՝ պարտավորություններ</b>	<b>52,687,986</b>	<b>35,517,023</b>
<b>Սեփական կապիտալ</b>		
Բաժնետիրական կապիտալ	5,962,005	5,362,005
Ենիսիոն եկամուտ	1,186,001	766,001
Գլխավոր պահուստ	320,000	300,000
Այլ պահուստներ	77,100	64,700
Չբաշխված շահույթ	2,715,454	1,456,280
<b>ԸՆդամենը՝ սեփական կապիտալ</b>	<b>10,260,560</b>	<b>7,948,986</b>
<b>ԸՆդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ</b>	<b>62,948,546</b>	<b>43,466,009</b>

Ա. Օսիպյան  
Վարչության նախագահ

Տ. Գալստյան  
Գլխավոր հաշվապահ

## Սեփական կապիտալում փոփոխությունների նասին հաշվետվություն

Բազար ԳԳ դրամ

	Բաժնե- տիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Գլխավոր պահուստ	Վաճառքի համար մատչելի ճեղքումների զեղվ. վերագնա- հատման պահուստ	Կուտակված շահույթ	Ընդամենը
Բաշվեկշիռը 01.01.2009թ. դրությամբ	5,362,005	766,001	270,000	25,732	1,120,864	7,544,602
Բառևացում պահուստին	-	-	30,000	-	(30,000)	-
Սեփականատերերի իետ գործառնքներ	-	-	30,000	-	(30,000)	-
Տարվա շահույթ	-	-	-	-	365,416	365,416
<i>Այլ համապատասխան եկամուտ</i>						
Իրական արժեքի տոկոսիությունից չվաստակված զուտ օգուտ	-	-	-	154,786	-	154,786
Վաճառքի համար մատչելի ճեղքումների իրացումից ֆինանսական արդյունքին տիրանցած զուտ օգուտ	-	-	-	(99,643)	-	(99,643)
Այլ համապատասխան եկամուտին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահատկ	-	-	-	(16,175)	-	(16,175)
Ընդամենը տարվա համապատասխան եկամուտ	-	-	-	38,968	365,416	404,384
Բաշվեկշիռը 31.12.09թ. դրությամբ	5,362,005	766,001	300,000	64,700	1,456,280	7,948,986

Հազար ՀՀ դրամ

	Բաժնե- տիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Գլխավոր պահուստ	Վաճառքի համար մատչելի ճեղքումների գծով վերազնա- հատման պահուստ	Կուտակված շահույթ	Ընդամենը
Հաշվետվիչը 01.01.2010թ. դրությամբ	5,362,005	766,001	300,000	64,700	1,456,280	7,948,986
Բաժնետիրական կապիտալի ավելացում	600,000	420,000	-	-	-	1,020,000
Հատկացում պահուստին	-	-	20,000	-	(20,000)	-
Սեփականատերերի իևս զրոյանցճեթ	600,000	420,000	20,000	-	(20,000)	1,020,000
Տարվա շահույթ	-	-	-	-	1,279,174	1,279,174
<b>Այլ համապարփակ եկամուտ</b>						
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ օգուտ	-	-	-	120,926	-	120,926
Վաճառքի համար մատչելի ճեղքումների իրացումից ձինճանակված արդյունքին տիրանցած զուտ օգուտ	-	-	-	(105,426)	-	(105,426)
Այլ համապարփակ եկամուտին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	-	(3,100)	-	(3,100)
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ	-	-	-	12,400	1,279,174	1,291,574
<b>Հաշվետվիչը 31.12.10թ. դրությամբ</b>	<b>5,962,005</b>	<b>1,186,001</b>	<b>320,000</b>	<b>77,100</b>	<b>2,715,454</b>	<b>10,260,560</b>

# Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Բազաի ԲԲ դրամ	31.12.10թ-ից ավարտված տարվա համար	31.12.09թ-ից ավարտված տարվա համար
<b>Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր</b>		
Շահույթ մինչև հարկումը	1,699,816	464,563
Ճշգրտումներ		
Ակտիվների հնարավոր կորուստների արժեզրկման ծախս	118,799	58,063
Մաշվածության և ամորտիզացիոն մասհանումներ	209,189	166,357
Բիժնական միջոցների վաճառքից եկամուտ	(1,346)	(130)
Ստացվելից տրվումներ	(90,796)	(93,966)
Վճարվելից տրվումներ	102,410	29,336
Ոչ անտրային ակտիվների և պարտավորությունների արտարժույթային փոխարկումներից գուտ (օգուտ)վճար	(6,344)	45,727
<b>Դրամական հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները</b>	<b>1,930,489</b>	<b>669,950</b>
<b>(Ավելացում)/Նվազում գործառնական ակտիվներում</b>		
Դեպոզիտված միջոցներ ԲԲ ԿԲ-ում	398,428	(209,408)
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(5,818,267)	(3,901,992)
Բաճախողներին տրված վարկեր և փոխառություններ	(9,800,321)	(3,523,482)
Այլ ակտիվներ	263,229	(99,455)
Ավելացում/Նվազում գործառնական պարտավորություններում		
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(5,219,740)	3,660,197
Պարտավորություններ համախորհրդների նկատմամբ	18,088,242	2,176,657
Այլ պարտավորություններ	204,878	8,936
<b>Ցուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկը</b>	<b>208,720</b>	<b>(1,306,597)</b>
Վճարված շահութահարկ	(77,896)	(228,303)
<b>Գործառնական գործունեությունից գուտ դրամական հոսքեր</b>	<b>128,826</b>	<b>(1,534,900)</b>
<b>Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր</b>		
Ներդրումային արժեթղթերի առք	(121,699)	(217,049)
Բիժնական միջոցների առք	(768,836)	(130,332)
Բիժնական միջոցների վաճառք	4,080	260
Ոչ նյութական ակտիվների առք	(118,762)	(728)
<b>Ներդրումային գործունեությունից գուտ դրամական հոսքեր</b>	<b>(993,108)</b>	<b>(347,849)</b>
<b>Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր</b>		
Բաժնետիրական կապիտալի բողոքարկում	1,020,000	-
Պատուցային արժեթղթերի բողոքարկում	-	250,000
Պատուցային արժեթղթերի մարում	-	(400,000)
Ֆինանս. կազմակերպ.-ից վարկերի ստացում	2,610,074	542,779
ԲԲ ԿԲ-ից վարկերի ստացում	820,800	-
Այլ երկարաժամկետ վարկեր	879,701	5,099,926
<b>Ֆինանսական գործունեությունից գուտ դրամական հոսքեր</b>	<b>5,330,676</b>	<b>5,492,705</b>
<b>Դրամական միջոցների և դրանց համարժեքների գուտ ամ</b>	<b>4,488,294</b>	<b>3,609,956</b>
<b>Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ</b>	<b>16,148,728</b>	<b>11,039,386</b>
Արտարժույթի փոխարկման արժեքումը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(604,083)	1,600,387
<b>Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջի դրությամբ (ծանոթ. 15)</b>	<b>20,111,980</b>	<b>16,149,728</b>